

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԸ ՌՈՒՄԻՈ ՀԱՅՈՑ ԳԱՂԹՕՉԱԽՆԵՐՈՒՄ

Ժամանակը Իսահակյանին նոր խորհրդածությունների առաջ է կանգնեցնում: 1901 թ. գարնանից նա Կովկասից դուրս չէր եկել: Իսկ մենք գիտենք, որ Իսահակյանը շատ էր սիրում ժամապարհորդել. «Ո՛վ եմ ես.- ժամփորդ, տիեզերական ժամփորդ, զանգի ղողանջը երգող» (Հ., 296): Սակայն հեռու ժամփաները գրավում էին նրան ոչ միայն իրենց ռոմանտիկ կանչերով: Նրա համար թափառումները ինքնանպատակ չէին: Բանաստեղծն իրեն զգում էր մեծ աշխարհի մի մասնիկը, տենչում էր տեսնել քաղաքակրթության բնօրրանները, գնալ համալսարանների հետքերով, նրա հոգին կարոտ էր ավելին իմանալու, զգալու, ժանաչելու: Եվ նա իր «Հիշատակարանում» մեծ խանդավառությամբ գրում է իր երազանք-ծրագրերի մասին. «Ահա՛ իմ ժամփեն. ողջո՛յն քեզ, ուղի.- իմ հոգուս ձգված դու ո՛ւր ես գնում - դեպի հեռո՛ւն, անհայտը, խորհրդավորը... Եվ նոր ավեր եմ գնում. ես կձեռքեն Կովկասի երկնաքերձ շղթան, կանցնիմ Սարամատիայի հարթավայրերը և կսլանամ Պոնտոսի սև ալիքների վրայով, կբախեմ Բյուզանդիոնի ոսկի դռները և կհանգչիմ աստվածային Ոլիմպոսի լանջերում:

Ես կերթամ մենակ, բայց իմ երազների ու խոհերի ստվար երամի հետ. կանցնեմ պատկառելի Աթենքի միջով, ուր Սոկրատի ու Հոմերոսի սրբազան ստվերները կտեսնեմ ու կխոսեմ հետները. կձեռքեն Միջերկրականը, կդեզերեմ Արշիպելագի դալար կղզիներում, և թռչիքս կհասցնեմ Նեղոսի սրբազան ավերին. բուրգերի տակ կխորհեմ աշխարհի ու կյանքի գաղտնիքների մասին, և անապատի հրապույրը կզգամ ու կլսեմ տիեզերական ղողանջը... Կիջենեմ Հորդանանի շուշանների մոտ, կծծեմ նրանց բուրմունքը, կողողվեմ սուրբ ավազանի ջրերով, կերթամ Գեթսեմանի այգում կլամ, Գողգոթայի վերա կհամբուրեմ սուրբ քարերը և Ս. Սիոնի մեջ կերգեմ Դավթի սաղմոսները, սրբատառ Ավետարանը անգիր կանեմ, կշրջեմ վսեմ Հիսուսի քայլած վայրերը. մարգարեների ոգով շնչած կթռնեմ Սինայի ամպամած գագաթը, որ անապատի դողանջող, երազուն լռության մեջ խորախորհուրդ բազմել է, և նոր պատգամներ կլսեմ երկնքից, տիեզերքից... և կմարգարեանամ աշխարհի ու ազգերի կյանքի վերա, մահի վերա, բախտի վերա...» (1903, հունվար 27, Հ., 294-296):

Ահա ինչի է ծարավ Իսահակյանի հոգին, ահա ուր է սավառնում նրա անհուն երևակայությունը: Բնական է, որ իր ծրագրածի մի մասը ինքը տե-

սավ (Հունաստան), մյուսը այդպես էլ մնաց երազանքների բավիղում: Բայց կարևորն այն է, որ բանաստեղծը իրեն միշտ էլ զգացել է աշխարհի մի մասնիկը, այլ ոչ սոսկ առանձնացված իր հայրենի երկրում, թեև հայրենիքը ամեն ինչից վեր է համարել: «Հիշատակարանի» նույն 1903 թվականի գրառման տակ մենք կարդում ենք. «Եվ թո՛ղ թափառե մարդ ո՛չ միայն աշխարհի հեռավոր ափերը, այլև երկնքում, աստղերում, բայց գա գլուխը հանգչեցնելու համար իր հայրենիքը, մոր գրկին, կրծքին դնելու. այնտեղ նա կլսե մոր ձայնը, մայրենի սուրբ լեզուն... Հայրենիքը՝ այդ մայրն է,- նրա սար ու ձորերը՝ մայրական դիմագծերն են, ով չի սիրում իր մորը, նա չի սիրում իր հայրենիքը...» (Հ., 297):

Անշուշտ, բանաստեղծը 28 տարեկանում դժվար պատկերացներ, որ ինքը յուրովի կանխագուշակել է իր ուղին... Չուր չի ասված, որ մեծ բանաստեղծները մեծ մարգարեներ են:

Նույն 1903 թ. քնարական երկերից մեկում էլ է արտահայտված նույն տենչանքը, նույն բաղձանքը.

*Նորից եկան գարնան անո՛ւշ օրերը,
Ցուպս առնիմ, ընկնիմ սար ու ձորերը,-
Միրտըս կուզե հեռունե՛րը սավառնել,
Նո՛ր ուղիներ, նո՛ր աշխարհներ թափառել:
...է՛յ դու, անգին, թափառական, վսեմ կյանք,
Հեռուների, անհունների իմ տենչանք...*

1903 թ. ամառն ու աշունը նա անց է կացնում հայրենի Ալեքսանդրապոլում, ուր տեղի են ունենում մի շարք նշանակալից հանդիպումներ: Դիմենք բանաստեղծի հուշերին. «Թորոս Թորամանյանի հետ ծանոթացա բանասեր Կարապետ Բասմաջյանի միջոցով Ալեքսանդրապոլում 1903 թ. աշնանը» (V, 70): Նույն շրջանում նա ծանոթանում է Մարտիրոս Սարյանի հետ: Այս անգամ բերենք մի հատված մեծ նկարչի «Գրառումներ իմ կյանքից» գրքից. «Իմ ծամփորդությունները Հայաստանում սովորույթ դարձան: 1903 թվականի ամռանը Միանսարյանի հետ նորից եկանք հայրենիք: Եղանք Ալեքսանդրապոլում, բացարձակապես կանաչից զուրկ և սև տուֆից կառուցված այդ քաղաքում: Այստեղ էլ ծանոթացա Ավ. Իսահակյանի հետ: Հանդիպումը թուուցիկ էր: Քսան տարի հետո մենք նորից հանդիպեցինք՝ այս անգամ Վենետիկում: Այդտեղից էլ սկսվեց մեր ընկերությունը մինչև նրա մահը...»¹: Անիում Իսա-

1 Մարտիրոս Սարյան, Գրառումներ իմ կյանքից, Երևան, «Սովետական գրող», 1980, էջ 85-86:

հակայանը ևս ունենում է հետաքրքիր հանդիպումներ. «1903 թե 1904 թվին ես հանդիպեցի Գևորգ Բաշինջաղյանին Անի քաղաքում (ես գրեթե ամեն տարի Անի էի գնում, դրա համար որոշ չնա՝ հիշում տարիս): Դժբախտաբար, իմ հասած օրը նա մեկնեց. արդեն մի քանի օր էր, նա այնտեղ էր և էտյուդներ էր արել: Ճարտարապետ Թորոս Թորամանյանի և դերասան, Անիի սիրահար լուսանկարիչ Վրույրի մոտ ծաշին հյուր եղանք միասին» (V, 97):

Տարեվերջին արդեն Իսահակյանը որոշակի ծրագիր էր մշակել մի տևական ժամանակով՝ 4-5 ամսով մեկնել Ռուսաստան, սկզբում հարավ՝ Նոր Նախիջևան, Ռոստով, ապա կայսրության մայրաքաղաքները՝ Մոսկվա և Սանկտ Պետերբուրգ:

Այդ ուղևորությունը պայմանավորված էր նրանով, որ ՀՅԴ ղեկավարությունը ուզում էր հավաստի պատկեր ունենալ Ռուսաստանում տիրող քաղաքական իրավիճակի և մանավանդ այն վերաբերմունքի վերաբերյալ, որ տածում էին կայսերական իշխանությունները հայ բնակչությանը հարուստ գաղթօջախների հանդեպ: Արդեն 1903-ի վերջերից լարված էր Ռուսաստանում քաղաքական իրավիճակը, երկիրը մոտենում էր վիթխարի սոցիալական ցնցումների շեմին, մոտալուտ հեղափոխությունը դառնում էր իրական հասկացողություն, իսկ նման իրավիճակում առաջին պլան էին մղվում ազգային անկախության պայքարի հետ առնչվող խնդիրները: Սա այն շրջանն էր, երբ կայսերական պետական մեքենան նույն հավասարության գծի վրա էր տեսնում թե՛ սոցիալական, թե՛ ազգային բնույթի պահանջներն ու ելույթները՝ համարելով երկուսն էլ երկրի համար հավասարապես պայթյունավտանգ: Պետք էր այս ամենը ենթարկել խորը վերլուծության և ապա մշակել ճիշտ քաղաքականություն՝ երկրում տեղի ունեցող իրադարձություններին համապատասխան: Ժողովրդական լայն ծանաչում վայելող բանաստեղծը հազիվ թե կասկած հարուցեր պետական մարմինների կողմից և կարող էր բավարար ձևով կատարել իր առաքելությունը, ուր, բնականաբար, կարևոր դեր էր հատկացվում նաև հայ ազգային հեղափոխության ծրագրերի պրոպագանդմանն ու տարածմանը, մանավանդ որ շատ հարցեր բնավ անծանոթ էին հայ համայնքների բնակչությանը: ՀՅԴ-ն ձգտում էր ունենալ ճիշտ դիրքորոշում ռուսաստանյան սոցիալ-քաղաքական իրավիճակների հանդեպ: Կուսակցության մի թևը գտնում էր, որ Դաշնակցությունը անպայման պետք է միանա հակակայսերական ուժերին, քանզի սոցիալական անարդարության դեմ տարվող պայքարը բարերար հող կտա լուծելու և ազգային խնդիրները, մյուս թևը, որին հարում էր նաև Իսահակյանը, գտնում էր, որ մեր պայքարը առաջին հերթին ազատագրական բնույթ ունի, որի գերնպատակն է ազատագրել Արևմտյան Հայաստանը օսմանյան լծից, և այս հարցում ետին պլան պետք է մղվեն սոցիալական խնդիրները, և որ մեծ անջրպետ կա ռուս

սոցիալիստ հեղափոխականների ու հայ ազգային մարտիկների միջև: Այս թեք կազմեց մեծամասնություն և Դաշնակցության շարքերը լքեցին սոցիալիզմին համակրողները՝ հռչակելով իրենց անջատողականներ: Իսախանյանը, որ տակավին 1899 թվականից դեմ էր գնում Դաշնակցության սոցիալիստական (ընկերվարական) պլատֆորմին, բնական է, որ 1903 թ. Դաշնակցության այդ աղմկահարույց ժողովում էլ մնաց հավատարիմ իր դիրքորոշմանը: Այդ մասին նա տարիներ անց պատմում է ընկերոջը՝ Վահան Նավասարդյանին (1925 թ. հունվարի 26-ին Վենետիկից). «Մենք (խոսքը գնում է Խորհրդային Հայաստանի ղեկավարների մասին - Ա. Ի.) ուզում ենք, որ քո անկեղծ սիրտը լինի այստեղ, քո համով խոսքն ու գրույցը, դու երիտասարդ գրողների նահապետը լինես... Մենք գիտենք, որ 1903 թվին երբ Դաշնակցությունից հեռացան անջատողականները, դու հալածում էիր Մարքսին: Դու 1907 Վիեննայի 4-րդ ժողովին պայքարել ես սոցիալիզմի դեմ, մենք գիտենք, որ դու նույնիսկ սոցիալիստ չես, բայց գիտենք որ դու բանաստեղծ ես»¹:

Այնպես որ, Իսախանյանը՝ հարազատ իր տարերքին և ի կատար իր հայրենասիրական պարտքի, արդեն 1904 թ. հունվարին Նոր տարու դիմավորումից անմիջապես հետո Թիֆլիսից նշանավոր Ռազմավիրական ծանապարհով ուղևորվում է դեպի Վլադիկավկազ: Ճամփան անցնում էր լեռնոտության գեղատեսիլ վայրերով, Դարիալի կիրճով... Եվ առաջին բացիկը ուղղում է Հովի. Թումանյանին. (1904, հունվարի 8, Վլադիկավկազ) «Սիրելի Օհանեսին բարևներ և բոլորին՝ վերնատանյաններին: Գիրքդ բոլորը ծայրեծայր կարդացի. կարծիքներս հետո կհայտնեն: Զո Ավո» (VI, 43):

Մոտ մեկ շաբաթ Վլադիկավկազում մնալուց հետո նա մեկնում է Կովկասյան Հանքային ջրերի նշանավոր առողջավայրերի վրայով Նոր Նախիջևան: Ծանապարհը վայրի բնության իր տեսարաններով չէր կարող չզմայլել երիտասարդ, ռոմանտիկ բանաստեղծին: Առաջին անգամն էր տեսնում բանաստեղծը Հյուսիսային Կովկասը իր ողջ գեղեցկությամբ: Տեսարաններ, որ զմայլել էին ժամանակին Պուշկինին և Լերմոնտովին: Եվ բանաստեղծի հոգում ավելի ու ավելի է ամրանում պաշտամունքը մայր բնության, բնության անմեկին գեղեցկության հանդեպ: Սրանք տեսարաններ էին, որ առհավետ պետք է դրոշմվեին բանաստեղծի հոգում: Պատահական չէ, որ մեծ հասակում Իսախանյանը այնքան սիրում էր ուղևորվել դեպի Կովկասյան Հանքային ջրերի հանգստավայրերը: Երևի այս ծանապարհի ազդեցության տակ են ստեղծվել հետևյալ տողերը.

*Դու անցորդի պես քեզ միայն ըզգա,
Եվ որպես ծամփորդ այս երկրի վրոա,*

1 Ավետիք Իսախանյանի նամակները, Գաիրե, «Յուսաբեր», 1959 թ., էջ 12:

*Ազատ հայացքով ճայիր ամենին,
Եվ անվերջ քայլիր քո անհայտ ուղին:*

Դոճի Ռոստով քաղաքի Նոր Նախիջևան անունը կրող հատվածը ավանդական հայկական բնակավայր էր: Այստեղ բնակվող հայերի նախնիները ժամանակին գաղթել էին Անիից: Նրանց օժանդակել էր այս վայրերում բնակության հաստատվելու ռուսաց ամենամշակավոր կայսրուհին՝ Եկատերինա Երկրորդը:

Ավելի քան 50 հազար հայություն էր բնակվում Նոր Նախիջևան քաղաքում, և հունվարի կեսից մինչև փետրվարի վերջերը Իսահակյանը գտնվում է հայոց այս կենտրոնում, ուր եղել էր ժամանակին Օդեսայից Թիֆլիս ծանապարհին 1899 թ. հունվարին և հանդիպել Ղազարոս Աղայանին: Այս անգամ ևս նա ունենում է մի շարք հանդիպումներ գաղութի հայ մշակութային և քաղաքական գործիչների հետ, ինչպես օրինակ՝ բանաստեղծ Սմբատ Շահագիզի որդու՝ հայտնի հայագետ Երվանդ Շահագիզի հետ, որի մասին գրում է. «Առաջին անգամ տեսա նրան 1904 թվին, Նոր Նախիջևանում, ուր նա թեմական դպրոցի բազմամյա ուսուցիչ էր՝ սիրված և հարգված ժողովրդի կողմից: Նա հասցրել էր արդեն մեծ թվով աշակերտների սերունդ, որոնց մեջ տեսնում ենք մեզ համար շատ թանկագին անուններ - բժշկապետ Քեչեկը, բանասեր Մինաս Բերբերյանը, բուսաբան հանգուցյալ Բեդկյանը և, վերջապես, մեր փայլուն գիտնական Ալեքսանդր Ջիվեկյանը» (V, 226-227):

Ապա և պատանեկության օրերից իր սիրելի ընկերուհին, համաքաղաքացին, բանաստեղծուհի Շուշանիկ Կուրդիյանը: Վերջինիս նվիրված հուշում Իսահակյանը գրում է. «Ռոստովից անցնելիս, երբ գնում էի Եվրոպա կամ Մոսկվա-Պետերբուրգ, այցելում էի նրան: Այդ շրջանից ունեմ նրա լուսանկարը: Տառապում էր խիստ հայրենաքաղծությամբ: Այդ շրջանից ինձ նվիրել է երկու բանաստեղծություն» (V, 122):

Այս փաստերը բանասիրությանը հայտնի են: Սակայն կա ևս մեկ ծանոթություն, որը շատ քչերին է հայտնի: Խոսքը գնում է Ավետիք Իսահակյանի և Ալեքսանդր Մյասնիկյանի ծանոթության մասին և այն դերի, որ խաղացել է Իսահակյանը Մյասնիկյանի ծակատագրում: Որ նրանք ծանոթ են եղել հնուց, վկայում են Իսահակյանի երկու նամակները՝ հղված «սիրելի Ալեքսանդրին» 1920-ական թթ. սկզբներին, իսկ ահա գրականության պատմաբան Ցոլակ Խանգադյանը իր «Ալեքսանդր Մյասնիկյան» գրքում բերում է մի շարք նոր, հետաքրքիր փաստեր այս առթիվ: Նախիջևանում գտնվելու ժամանակաշրջանում Իսահակյանը ունենում է մի շարք հանդիպումներ տեղի հայրենասեր պատանիների հետ, որոնք Դաշնակցություն կուսակցության երիտասարդ ղեկավարներն էին: Եվ նրանց թվում՝ Ալեքսանդր Մյասնիկյանը: Երիտասարդն իր

վառ անհատականությամբ գրավում է Իսահակյանի ուշադրությունը, իսկ երբ բանաստեղծն իմանում է, որ Մյասնիկյանը մեծ փափագ ունի սովորելու Մոսկվայի Լազարյան ձեմարանում, հանձն է առնում օգնելու նրան: Եվ երբ մեկնում է Մոսկվա, Մյասնիկյանին հետը տանում է, և ըստ ամենայնի օգնում, որ երիտասարդն ընդունվի Լազարյան ձեմարան: Ավելին, Իսահակյանը նամակ է գրում Բաքու՝ Հայկական բարեգործական ընկերությանը, խնդրանքով, որ թոշակ նշանակեն խոստումնալից մի հայ երիտասարդի՝ Ալեքսանդր Մյասնիկյանին: Իսահակյանի խնդրանքը բավարարվում է:

Հենց այս պատմության մասին է իր գրքում վկայում Ցոլակ Խանզադյանը, որը նույն ժամանակ սովորում էր Մոսկվայի Լազարյան ձեմարանում: «Նոր Նախիջևանի թեմական դպրոցն ավարտելուց հետո նա եկավ Մոսկվա - 1904 թվականին - Լազարյան ձեմարանը մտնելու նպատակով: Նույն թվականին էլ ծանոթացանք Ալյոշային, որ (այն ժամանակ արդեն անվանի) բանաստեղծ Ավետիք Իսահակյանի նման բարեկամ հովանավորող ուներ:

- Շատ լավ տղա է, պատրաստված,- խոր համակրանքով ասել էր Ալյոշայի մասին Ավետիք Իսահակյանը»¹:

Նոր Նախիջևանից ևս մեկ նամակ է ուղղում Իսահակյանը Հովհաննես Թումանյանին, ուր որոշակի տեղեկություններ է հայտնում իր ծրագրերի մասին. (1904, փետրվար 23) «Սիրելի Օհաննես... Ես դեռ մարտի 3-5 այստեղ կլինեմ, դու գրիր, կհասնի, եթե այստեղ էլ չլինեմ, ինձ կհասցնեն, հետևյալ հասցեով գրիր. 2-ая Георгиевская, N 3, А. Исаакяну, Нахичевань н/Д. Այստեղ գործերս լավ են գնում, հետո կանցնեմ Մոսկվա, ապա դեպի Կովկաս:

Ես էլ չեմ կարող պարապել, բայց այլ պատճառներից՝ զբաղված եմ՝ ժամերս թռչում եմ ուրիշ բաներով: Այստեղ սկսվել է հայկական կյանքով ու գրականությամբ հետաքրքրվիլը <...> մեզ շատ չեն ծանաչում, իսկ Դերեմիկին ու Շանթին՝ համարյա չեն ծանաչում. Ծառուրյանը մեզմից խալֆա է հռչակված... Կովկասում շատ նորություններ կան, երևի, բայց շատ քիչ եմ լսում: Բաքվա ռումբը՝ խեղճ հայ ժողովրդի մեջ պայթեցնել՝ ինձ շատ է զայրացրել, և նզովելով նզովում եմ այդ իշու ձագ, անմիտ հերոստրատեն-րին...» (VI, 44, 45):

Թեև Իսահակյանը Թումանյանին գրում է, թե «չեմ կարող պարապել», բայց հենց Նոր Նախիջևանում է նա ստեղծում մի քանի բանաստեղծական շեղևներ. խոհա-փիլիսոփայական «Դու անցորդի պես քեզ միայն ըզգա՛...» և «Շատ մի՛ տխրիր, շատ մի՛ խնդար, սիրելիս...»: Վերջին բանաստեղծությունը ամբողջապես կարելի է համարել մի խոհական էտյուդ, ուր ամեն տողը յուրո-

1 Ցոլակ Խանզադյան, Ալեքսանդր Մյասնիկյան (բնութագրման փորձ), Պետիրատ, Երևան, 1926, էջ 5:

վի աֆորիզմ է. «Այս աշխարհում և ոչ մի բան հիմք չունի», «Վաղանցուկ են, կան ու չկան... Բոլոր իրերն ու աստղերը անհունի», «Լայնսիրտ եղիր, ողջը երազ համարե», «Լացը՝ ժպիտ ու սերը՝ ցավ համարե», «Թե որ ապրես, կյանքըդ ինչո՞ւ համար է», «Շատ մի՛ հրժվիր, սերն էլ կանցնի, բայց ոչինչ, կյանքն էլ կանցնի,- այդ որ ոչինչ ու ոչինչ»: Կարծես Իսահակյանը իր համար այստեղ մի նոր ոճ է մշակել, երբ յուրաքանչյուր տող մի դիպուկ ու թարմ եզրակացություն է: Աֆորիստիկ եզրահանգումները և փոխտառադարձական խորհրդածությունները Իսահակյանի գրելաժողի հարազատ տարրերն են, նրա չափածոյի բնորոշ առանձնահատկությունները:

Հաջորդ երկու բանաստեղծությունները՝ գրված Նոր Նախիջևանում, պիտի համարել սիրային բնույթի երկեր, որոնց հեռակա հերոսուհին կրկին Շուշանիկ Մատակյանն է՝ Իսահակյանի պոեզիայի ամսար աստղը: Ես նկատի ունեմ «Սեկը չեղավ, որ իմանար վշտերս...» և «Ա՛խ, իմ սիրուս վառ գարունը թոշնեցավ...» բանաստեղծությունները: Այս երկերը արտահայտում են Իսահակյանին համակած զգացմունքները: Սիրակարոտ բանաստեղծի հոգին երկար տարիներ չուներ իր ռեալ, ստույգ հերոսուհին, դեռևս նրա հոգու տիրակալը Շուշանիկն էր: Սակայն այդ սերը վիթխարի վիճ էր առաջ բերել նրա հոգում, և այդ զգացմունքը տարածվում էր ոչ միայն Շուշիկի, այլև ընդհանրապես կանանց վրա, սեր հասկացողության վրա: Իսահակյանի մտաշխարհում ձևավորվում էր այն գաղափարը, որ մաքուր, երկնային սերը գոյություն չունի, եթե մեկը, որին դու տեսնում էիր ոչ թե երկրի վրա, այլ աստղերի մեջ, զորու եղավ այդպես ցինիկորեն, սոսկ հաշվեդիտական նպատակներից դրդված՝ զետնով տալ քո սերը, խափանել ռոմանտիկ հույսերն ու երազները, ապա ինչպիսին կլինեին այլ կանայք, սովորական երկրային կանայք, որոնց դու այդպես էլ ի վիճակի չեղար պատասխանել նույն սիրո զգացմունքով, թեկուզ իր «թափառ կյանքում» նկատի ունեմ հետշուշիկյան շրջանը (1893-1908 թթ.), իսկ այդ շրջանը իրոք որ շատ երկար տևեց: Նշված տարիների Իսահակյանի համարյա բոլոր բանաստեղծություններում արտահայտվում է ոչ թե սիրո վայելքը, սիրո երջանկությունը, փոխադարձ սիրո զգացմունքը, այլ՝ սիրո տանջանքը, այրված սիրո մորմոքը, սիրո կարոտը... Ահա և Նոր Նախիջևանում էլ գրված սիրային գործերը մեր ասածի յուրովի հաստատումն են: Բանաստեղծը խոստովանում է.

*Սեկը չեղավ, որ իմանար վշտերս,
Քնքուշ ձեռքով դարման աներ վերքերիս.
Սեկը չեղավ, որ գուրգուրեր վարդերս,
Անուշ բույր տար, վարդի գույն տար երգերիս...*

Անցել էր «վճռաբեկ» 1893 թվականից 10 տարուց ավելի, բայց ամենն այնպես է ապրվում-վերհիշվում, որ կարծես երեկ էր եղել.

*Այս, իմ սիրուս վառ գարունը թռչնեցավ,
Ձառ վարդերս կոկոններում մընացին.
Դալար սրտիս սուրբ արցունքը քարացավ
Ու ծանրացավ սրտիս վրա դառնագին:*

*Մեռի՛ր, գընա՛... առանց քեզ էլ կյանքը կա,
Ուրիշ վարդեր կըշողշողան գարունքին.
Ուրիշ շըրթներ գուցե վաղը կամ հիմա
Կըհամբուրեն քո սիրածին կաթոգին...*

Այնպես որ, Նոր Նախիջևանում, ըստ երևույթին, կար ստեղծագործական ոգեշնչման մթնոլորտ: Այս տողերը մենք գրեցինք ինտուիտիվ կերպով, բայց հետո, երբ մանրամասն հետամոտ եղանք այդ շրջանում նրա գրած կամ ստացած նամակներին, մեր առջև բացահայտվեց մինչ այդ անհայտ սիրո մի պատմություն, ավելի շուտ՝ նովել: Կիսվեց ընթերցողների հետ այն չափով, ինչ մեզ է հայտնի:

Իսահակյանի վեցհատորյակի նամակների VI հատորում հրատարակված է մի ռոմանտիկ ու խանդավառ պատմություն, ուր նկարագրված է 29-ամյա բանաստեղծի վերելքը դեպի Արագած լեռան բարձունքները. «Կեսօրին լեռան գլխունն էինք. հրացանի որոտումնքով ողջունեցինք մեր վերելքը, արծիվները շփոթված պտույտ գործեցին մեր գլխավերևը, միայն երկինքը և արևը մնացին լուռ, անտարբեր և ազա՛տ... Փչում էր ազա՛տ քամին այդ բարձունքում և գնում դեպի Հիմալայ կամ ավելի հեռու՝ գալով ավելի հեռո՛ւ տեղերից... (Արագածը ունի 4 մեծ գագաթներ, որոնց մեջ կա մի լիճ՝ հին հրաբխային կրատերի բերան. մենք բարձրացանք միայն մեկ գագաթը...)» (VI, 47-48):

Ում էր պատմում երիտասարդ բանաստեղծը այսպես հափշտակված, սրտաբուխ: Նամակի հասցեատերն է Եվգինե Թիթոյանը, բնակվող Նոր Նախիջևանում, նամակը գրված էր 1904 թ. օգոստոսի 15-ին Ալեքսանդրապոլից, այսինքն՝ մոտ 4 ամիս անց, ինչ Իսահակյանը եղել էր Նոր Նախիջևանում: Իսկ արխիվային պրպտումները մեզ բերեցին հետևյալ հայտնության - Իսահակյանը 1904 թվականի փետրվար-մարտ ամիսներին Նոր Նախիջևանում ծանոթանում է օրիորդ Եվգինե Թիթոյանի (Թիթոպայի) հետ: Գարնան այդ ամիսներին հենց Եվգինե Թիթոյանն է հանդիսանում Իսահակյանի սիրակալու ջնարի մոր ոգեշնչման աղբյուրը: Երկար ժամանակ բանաստեղծը նման զգացմունքներ չէր ունեցել: Այդ մասին են վկայում նրա սիրային ջնարերգու-

յան 1900-1904 թթ. գործերը: Եվ ահա նորնախիջևանյան բանաստեղծական զգացմունքների նոր հերոսուհին, մի դեռատի գեղեցկուհի, որ հիմք է տալիս Իսահակյանին հենց Նոր Նախիջևանում գրել նման տողեր.

*Վարդի շրթունքըդ, աղջիկ աչագեղ,
Համբույրի համար հասել է ահա.
Օ, մի՛ արձակիր մազերըդ շքեղ
Հոգնած, ջարդված իմ կրծքի վրա:*

*Գարունը վաղուց գնաց իմ սրտեն,
Եվ սիրտըս հիմա՝ ծանրը, վըշտահար,-
Վարդի շրթունքըդ հասել է արդեն
Հնչուն համբույրի, բայց ոչ ինձ համար...*

Համարյա դիմանկարային ժշտությամբ Իսահակյանը վերակերտում է նորնախիջևանցի (որը հայտնի էր իր աչագեղ հայացքներով) դեռատի գեղեցկուհու կերպարը: Եվզհին Թիթրյանը ասես օգնում է Իսահակյանի ջնարին՝ դուրս գալու շուշիկյան տևական կապանքներից, կրկին ոգևորվել կանացի գեղեցկությամբ, զմայլվել փարթամ մազերի շուքով ու վարդ-շրթերի «հնչուն» համբույրով... Երբ դեռ երեկ թվում էր, թե բանաստեղծի սիրտ գարունը թռչնեցավ...

Նոր Նախիջևանից Մոսկվա մեկնելուց առաջ երիտասարդները պայմանավորվում են նամակագրություն ունենալու վերաբերյալ (օ՛, նամակների անիմանալի աշխարհ՝ այսպես ցավալիորեն անհետացող մեր օրերում): Իսահակյանի մեր վկայակոչած նամակը՝ գրված Ալեքսանդրապոլից 1904 թ. օգոստոսի 15-ին, ցավոք, միակ պահպանվածն է օրիորդ Թիթրյանի հետ ունեցած բանաստեղծի նամակագրությունից: Սակայն Իսահակյանը իր ձեռագրերի մեջ երախտագիտությամբ պահել էր Եվզհին Թիթրյանի իրեն գրած նամակներից մեկը: Սա բառիս բուն իմաստով հանդիսանում է Եվզհին Թիթրյանի կենդանի խոսքը, և անշուշտ կարևոր վկայություն օրիորդի կերպարի մասին: Գրված է Նախիջևանից հուլիսի 20, 1904 թ. (բերում ենք որոշակի հապավումներով).

«Հարգելի պ. Ավետիք!

Շնորհակալությամբ ստացա Ձեր նամակները, բայց վերջինը դժբախտաբար ստիպված եղա առնել փոստից հենց այսօր. շատ ցավում եմ, որ ձգեցի Ձեզ սպասողական դրության մեջ: 2 շաբաթից ավելի է, որ քրոջս ամառանոցում էի, գնացի երկու օրվան և մնացի այսքան... Երեկ վերադարձա և իսկույն փոստ գնացի. ես զգում էի, որ վաղուց է այնտեղ նամակ կար ձեզանից: Այդ նամակը սաստիկ տխուր տպավորություն արավ վերաս, չի կարողացա

արտասուքս զսպել կարդալով թե մեր ազգի անտանելի դառն դրությունը, թե այն բազմաթիվ զոհերը, որոնք մի՞թե իզուր են թափում իրանց թանկագին արյունը, թե վերջապես Ձեր սեփական հուսահատ հոգեկան դրությունը այդպես տխուր, վշտալի և ծանր... Գրեցե՞ք եթե պահանջ եք զգում ասելու, գուցե դրանով մի քիչ հեշտ զգաք Ձեզ, ես միշտ պատրաստ եմ լսել Ձեզ, հասկանալ և ցավել Ձեզ հետ:

...Ես հավատացած եմ, Դուք ստեղծագործելու ընդունակություն ունեք և զգում եք Ձեր մեջ ուժ... Դուք պետք եք թե՛ ազգի համար, թե՛ մարդկության: Լսում եք՝ ժողովուրդը սիրում է Ձեզ, ուրեմն ես կը կարծեմ, որ ամեն տեղ դուք կը գտնեք պատսպարան... Գրեցե՞ք, կը սպասեմ: Մնացյալը հետո, ուղարկում եմ կարոտալի բարևներս: Եվգինե» (ԱԻԸԱ):

Այս մամակը թերևս շատ բան է ասում Եվգինե Թիթոյանի մարդկային խառնվածքի, բնավորության, դաստիարակության մասին: Նամակագիրը իրոք մի անձ է, որ հոգևոր կյանքով է ապրում և բնականաբար նրա հետ ընկերություն անելն Իսահակյանի համար հաճելի իրողություն էր: Մենք չենք կարող պարզորոշ ասել, թե այդ ընկերությունը ինչ զարգացում ունեցավ և վերածե՞ց արդյոք մեծ սիրո: Սակայն բացահայտ է, որ նրանք ծագում էին իրար, իսկ բաժանումից հետո մամակները պիտի դառնային նրանց հոգու յուրահատուկ թարգմանները: Մենք չգիտենք, թե ինչու, ինչ հանգամանքների պատճառով նրանց բարեկամությունը չունեցավ հետագա զարգացում և ինչ-որ մի հատվածում ընդհատվեց: Սակայն Իսահակյանը չէր մոռացել նորմալիզացիայի «աչազեղ» աղջկան, որ միշտ պատրաստ էր լսելու իրեն և կարոտելու...

...48 տարի անց, Նոր Նախիջևանում բնակվող իր հին ծանոթին, հայագետ և բանասեր Խաչերես Փորքշեյանին բանաստեղծը խնդրում է իմանալ, թե կենդանի՞ է արդյոք Եվգինե Թիթոյանը և եթե հնարավոր է հայթայթել իր համար տիկնոջ հասցեն: Որոշ ժամանակ անց Խաչերես Փորքշեյանը կատարում է բանաստեղծի խնդրանքը: Եվ բանաստեղծը հայագետին ուղղված պատասխան մամակում, ի թիվս որոշ հարցերի, գրում է հետևյալը. «Շնորհակալ եմ Թիթորվայի, Ժենյա, հասցեի համար, բայց դեռ չեմ գրել, և չգիտեմ ի՞նչ գրեմ, հաճելի կլինի՞ իմ մամակը նրան: Աստված հետը» (VI, 383): Մնում է հիշատակել այս տողերի գրման տարեթիվը՝ 1952 թ., մայիսի 26...

Այսօր մոռացության գիրկն է անցել բանաստեղծի կյանքի պատմության մի գոլտրիկ էջը և թերևս նրա հերոսուհու անունը, սակայն այսօր էլ մեզ չեն կարող չհիացնել Նոր Նախիջևանում Իսահակյանի գրած սիրային բանաստեղծությունները, որոնց հերոսուհին նոր ավյուն ներարկեց սիրուց «դադլված» բանաստեղծին: Եվ հենց այդ հանգամանքը ինչ-որ չափով լուսաբանում է բանաստեղծի սիրային պոեզիայի կապը Իսահակյանի կյանքի պատմության հետ:

Թեև Ռուսաստանի մայրաքաղաքը Սանկտ Պետերբուրգն էր (Պետրոս Մեծի ժամանակաշրջանից), սակայն բուն ռուսական կենտրոնը Մոսկվան էր: Եվ ուղևորվել Ռուսիա նշանակում էր առաջին հերթին լինել Մոսկվայում, քանզի նա էր երկրի ջիղը, գործնական, ազգային կյանքի կենտրոնը և այնտեղ էր, ավանդաբար, հավաքված հայությունը, դա էր հիմնական հայկական գաղթօջախը: Հայերը Մոսկվայի տնտեսական-արդյունաբերական կյանքում հսկայական դեր էին խաղում: Հայկական կապիտալը Մոսկվայում գրավում էր առաջնային դիրքերից մեկը և գնալով ավելի զարգանալու տենդենց ուներ: Ուստի շատ հարցեր՝ կապված կովկասահայության, Հայաստանի նահանգի հետ, լուծվում էին առաջին հերթին Մոսկվայում:

Ռուսական այդ ամենամեծ քաղաքում տարիներ շարունակ հաջողությամբ և արդյունավետ կերպով գործում էր «Մոսկովյան հայկական կոմիտեն» («Московский армянский комитет»), հայության հիմնաքարը, իհարկե, Արևելյան լեզուների Լազարյան ինստիտուտն էր: Հայագիտության և հայապահպանման մի կատարյալ կենտրոն, որն ուներ իր հրատարակչությունը, հայկական ձեռագրատունը և մշտապես մշակութային երեկոներ էր կազմակերպում, չթողնելով, որ հայկական կյանքը խամրի Մոսկվայում: Մի ամբողջ հայկական թաղ կար քաղաքի կենտրոնում՝ «Армянский переулоч», իր եկեղեցիով, բանկով և առևտրային բազմաթիվ գրասենյակներով: Հայությունը Մոսկվայում օտար տարր չէր և վայելում էր նաև կայսերական մարմինների հովանավորությունը, քանի որ հայ թե՛ կապիտալը, թե՛ գործունյա աշխարհը միայն ամրապնդում էին Մոսկվայի տնտեսությունը:

Իսահակյանը Դոնի Ռոստովից գնացքով մեկնում է Մոսկվա, ամենայն հավանականությամբ մարտի կեսերին: Մոսկվայում բանաստեղծի գտնվելու իրադարձությունների մասին լավագույն վկայություններն են նրա հուշերը տաղանդավոր բանաստեղծներ Ալեքսանդր Ծատուրյանի և Վահան Տերյանի մասին, ինչպես և նամակները: Ցավոք, 1904 և 1905 թթ. հիշատակարանյան գրառումները չեն պահպանվել:

Բանաստեղծ Ալեքսանդր Ծատուրյանը երկար տարիներ ապրել է Մոսկվայում, և Իսահակյանը, բնականաբար, առաջիններից մեկը հենց նրա հետ պիտի հանդիպեր: Իսահակյանի «Երկու խոսք ընկերոջս հիշատակին» հակիրճ հուշագրականում մենք կարդում ենք. «Ալեքսանդր Ծատուրյանը 90-ական թվականներին ամենից տարածված, ժողովրդական բանաստեղծն էր: Ես անձամբ ճանաչեցի նրան, երբ 1904 թվին, զարմանը Մոսկվայումն էի: Մի կիրակի օր գնացի մոտը: Նա հյուրանոցումն էր ապրում: Ներկայացրի ինձ: Պատանեկության օրերիս տածած հարգանքի արտահայտությունների համար հուզվեց և աչքերը լցվեցին: Այն ժամանակ նա քառասուն տարեկան էր. քաղցր դիմագծեր ուներ, գեղեցիկ, գանգուր մազեր և ջղային հիվանդ, կրակով աչքեր:

Սենյակը փոքր էր, մի պատը գրադարանն էր բռնել, ուր կային միմիայն հայ, ռուս և օտար բանաստեղծների գործերը՝ բոլոր մեծ բանաստեղծները ներկա էին այնտեղ: Բայց գիտական-փիլիսոփայական ո՛չ մի գիրք:

Ինձ տարավ իր հաճախած ծաշարանը, ուր երկար ու երկար գրույց ունեցանք: Սիրտը բացեց ինձ մոտ, ինչպես մարդ բացում է վաղեմի ընկերոջ առաջ: Դժգոհ իր վիժակից, վրիպած էր համարում իր կյանքի ուղին. իր ծակատագրին չէր հետևել. տնտեսական անձուկ պայմանները փշրել էին պատանեկան երազները, հարկադրված եղավ ծառայել վաճառականներին, կյանք մաշել նրանց գարշելի կանտորաներում և սակավ ժամանակ և ջարդված տրամադրություն ունենալ միայն՝ զբաղվելու իր սիրած նվիրական գործով՝ գրականությամբ: Այնուհետև մի-երկու հանդիպումներ էլ ունեցանք և այնպես ընդմիջտ վերջացան մեր տեսակցությունները: Իր գրքերից նվիրեց ինձ սրտաբուխ մակագրություններով...» (V, 100-101):

Մոսկվան Սանկտ Պետերբուրգից հետո Ռուսաստանի երկրորդ մշակութային կենտրոնն էր: Իսահակյանին, անշուշտ, գրավում է Մոսկվան իր թատրոններով, ցուցահանդեսներով, հարուստ ու աշխույժ գրական կյանքով, արվեստի նոր հոսանքների պայքարով: Այն բուռն ստեղծագործական մթնոլորտը, որին կարոտ է ամեն մի արվեստագետ, լրիվ հակասությունն էր Ալեքսանդրապոլի և Մույնիսկ Բաքվի ու Թիֆլիսի մշակութային անդորր ու միատարր կյանքի: Մոսկվայի Լազարյան ինստիտուտի և նշանավոր Ռուսյանցկյան գրադարանները դարձան Իսահակյանի պարապմունքի սիրելի վայրերը: Նրան հատկապես հետաքրքրում էին հայկական հին ձեռագրերի ու պարբերականների հազվագյուտ հավաքածուները, որ ժամանակին այդ գրադարաններին նվիրաբերել էին Արղության-երկայնաբազուկյան իշխանները և Լազարյանների ընտանիքը: Հարուստ գրականություն էր ստացվել նաև Հնդկաստանի հայկական գաղութից: Կրքոտ գրասերի համար սիրելի վայրեր են դառնում և՛ մոսկովյան «Արբատ», և՛ «Օխոտնի րյադ» փողոցների նշանավոր բուկինիստական գրախանութները, ուր ժամեր է անցկացնում բանաստեղծը՝ ծանոթանալով ռուսական ու եվրոպական գրքերի հին ու հազվագյուտ նմուշներին և ուժերի ներածին չափով ձեռք բերում մի շարք գրքեր իր համար: Ի դեպ, Իսահակյանի գրադարանում պահպանվել են որոշ գրքեր՝ ձեռք բերված Մոսկվայում 1904 թվականին: Բայց, ինչպես ասացինք, չեն պահպանվել այդ շրջանի Իսահակյանի օրագրային գրառումները, իսկ որ այդպիսիք եղել են, դա կասկածից վեր է, քանի որ Իսահակյանը սովորություն ուներ իր օրագրի հիշատակարաններում պարբերաբար գրի առնել իր խոհերն ու մտորումները, ստեղծագործական ծրագրերը և գրելիք նյութերը: 1904-1905 թթ. օրագրերը ըստ երևույթին կա՛մ բռնագրավվել են 1908 թվականին Իսահակյանի ձերբակալման նախօրեին, կա՛մ էլ արտասահման մեկնելիս՝ սահմանին: Մոսկվան

Իսահակյանի համար առավել սիրելի էր Լազարյան ինստիտուտի առկայությամբ: Ռուսաստանի հայագիտական այս խոշոր կենտրոնը տասնամյակներ շարունակ պրոպագանդել է հայ գիրն ու մշակույթը, նպաստել հայ պատմության ծանաչմանը ռուսաստանյան շրջաններում, իր հազվագյուտ հրատարակություններով և մշտապես կազմակերպվող մշակութային հանդեսներով ու երեկոներով հսկայական դեր է խաղացել հայ-ռուսական պատմական, քաղաքական կապերի ամրապնդման գործում: Լազարյան ծննդավայրը նաև կրթական վիթխարի առաքելություն է ունեցել, տասնյակ տարիներ կրթել ու ուսում է տվել հայ ուսանողությանը, դաստիարակելով նրանց հայրենասիրության ու լուսավորության ոգով: Այս հայապահպան կարևոր կենտրոնում Իսահակյանն ունենում է մի շարք հանդիպումներ ծննդավայրի ղեկավարության և սաների հետ, տեղյակ պահում նրանց Կովկասի ու Արևմտահայաստանի քաղաքական վիճակին և իր հերթին ըստ ամենայնի սերտացնում հարաբերությունները Մոսկվայի հայկական կոմիտեի ու հայրենյաց հայրենասիրական կազմակերպությունների հետ: Թեև երիտասարդ, բայց հայկական շրջաններում արդեն մեծ անուն ու համբավ ունեցող բանաստեղծ էր Իսահակյանը, ուստի Մոսկվայում ևս նա փնտրված մարդ էր, սիրելի պոետ:

Ուշագրավ է, որ հենց Մոսկվայում է Իսահակյանը ծանոթանում Վահան Տերյանի հետ. «Վահանին առաջին անգամ տեսա Մոսկվայում, 1904 թ. մարտ ամսին: Այցի էի գնացել Լազարյան ծննդավայր: Ինձ շրջապատեցին մի քանի ուսանող-աշակերտներ, որոնց մեջն էր Վահանը: Բոլորն ինձ հարցեր էին տալիս և հարցերիս պատասխանում: Ցույց էին տալիս ծննդավայրի սրահները, գրադարանը, դահլիճը և այլ անկյուններ, պատմում էին ծննդավայրի հիմնադրոց ավանդություններից, մինչդեռ Վահանը լուռ ու անխոս հետևում էր մեզ՝ աչքը վրայիցս չհեռացնելով: Երբ խոսք էի ուղղում նրան, կարմրում էր նա, շփոթվում:

Մնաք բարևին՝ Վահանը ձեռքս ամուր սեղմեց և շնորհակալ. «Շատ ուրախ եմ, որ Ձեզ տեսա»: Ես հրավիրեցի նրան ինձ մոտ: Մի երկու օր հետո Վահանն իր ընկերոջ հետ մոտս եկավ: Որքան ուղեկցող ընկերը սիրում էր շատախոսել, նույնքան նա լուռ էր ու սակավախոս: Վահանը հետաքրքրվում էր գրականությամբ, ինչ են գրում Ղ. Աղայանը, Շիրվանզադեն, Հ. Թումանյանը, Դ. Դեմիրձյանը և ուրիշները:

Երբ ես նայում էի նրան՝ հուզվում էր, գլուխը կախում: Ձգում էի, որ հայացքս ճնշում է այս երկչոտ, վեհերոտ տղային, և խուսափում էի նրա աչքերին նայելուց: Իմ հարցին, թե՞ արդյոք ուսանողությունը հետևում է հայ գրականությանը, Վահանը, կարծես, բոլոր ուսանողների կողմից, իբրև պատասխան, կարմրելով արտասանեց իմ ոտանավորներից մի երկու նմուշ» (V, 112-113):

Մոսկվայում Իսահակյանն ստեղծագործել է բավականին արդյունավետ: Այդ հիմնավորը քաղաքը, որ մի առանձին փայլ էր ստանում գարնանը, ներշնչանքի աղբյուր էր բանաստեղծի համար: Այդ շրջանի բանաստեղծություններից մի քանիսը ժամանակին տպագրվել են հայ մամուլում, Թիֆլիսում և Սանկտ Պետերբուրգում, իսկ այնուհետև զետեղվել են Իսահակյանի հատորներում: Բայց կան նաև այնպիսիք, որ անտիպ են մնացել և միայն տարիներ անց տողերիս հեղինակը զետեղեց դրանք «Հայդուկի երգեր» (Երևան, 1990 թ.) գրքում: Մոսկովյան շրջանի բանաստեղծություններում կա մի ոգեշունչ երկ, ուր այլաբանորեն իր արտահայտությունն է գտել մոտալուտ փոթորկի ազդանշաններով տրոփող իրականությունը: Բացահայտ երևում է, որ բանաստեղծը անարձագանք չի մնում շրջապատի հանդեպ, և նրա քնարական հերոսի ոգին էլ համահունչ է իր ժամանակի կանչերին:

*Մռայլ ամպերից, հըզոր կայծակով
Սիրտը շանթահար մի մրըրկահավ
Ծովափի խոժոռ ժայռերին ընկավ:
Եվ ընկավ, ծածկվեց հողով ու քարով,
Թավ մամուռ պատեց նրա շիրիմին,
Եվ տարիք անցան համըր շարքերով:
Բայց երբ երկնքում իրար դեմ ու դեմ
Ամպերն են խառնվում և որոտում են՝
Հուզված սրտերում կըրակ ու կայծակ,-
Նա լուռ հիշում է, որ տարիք առաջ
Իրեն սրտումն էլ տենչ կար ու կրակ,
Որոտ ու զայրույթ և սեր ու շառաչ...*

«Մրկահավի» կերպարը մոտալուտ փոթորկի, այն է՝ ապստամբության յուրովի խորհրդանշն է, գուցեև այս կերպարը գալիս է Մաքսիմ Գորկու հանրահայտ «Մրկահավի երգը» երկից, որը 1901 թ. առաջինը հայ իրականության մեջ Իսահակյանն է թարգմանել հայերեն:

Իսահակյանը Մոսկվայում գրել է խոհա-քնարական բնույթի երկեր ևս, ուր կան թե՛ ընդգծված հոռետեսական բնույթի («Ինչպես ուշ աշնան...», 1904, ապրիլի 30, որի առաջին տարբերակը «Ցո՛ւրտ է ու գիշեր...» սկսվածքով պարունակել է 18 տող, հետագայում այն կիսով չափ կրճատել է և հիմնովին խմբագրել), թե՛ ընդգծված փիլիսոփայական բնույթի գործեր:

*Քաղած վարդը թըփին ետ չի գա նորից.
Ետ չի գա հավետ ժամն անցած օրից:*

*Անցած կյանքըդ հիմա երազ է, մշուշ,
Վիշտն ու սերդ անուշ՝ հուշեր են քնքուշ:*

*Սիրտդ մաքուր պահիր ու բարի արա,
Որ ամպ չընստի հուշերիդ վըրա:
Մի՛ վռագիր... մահին կհասնիս վաղ-ուշ,
Չեղածի պես կանցնին և՛ երազ, և՛ հուշ...*

Անշուշտ Մոսկվայում բանաստեղծը կրկին հիշել է Նորմախիջևանյան իր հերոսուհուն, որին նա ուղղել է «Վարդի շրթունքդ, աղջի՛կ աչագեղ...» գողտրիկ երկը՝ լի սիրո կարոտով. «Օ, մի՛ արձակիր մազերդ շքեղ // Հոգ-նած, ջարդված իմ կըրծքի վրա...»: Այսպիսի խոսքերը անհիմն չեն գրվում: Հեղինակը ընդամենը 29 տարեկան էր, և երբ նա ասում էր՝ «Գարունը վաղուց գնաց իմ սրտեն, // Եվ սիրտըս հիմա ծանր, վըշտահար,- // Վարդի շրթունքդ հասել է արդեն // Հնչուն համբույրի, բայց ոչ ինձ համար...», մտածում ես՝ մի՞թե իրոք Իսահակյանի պես զորեղ քնարերգուի սիրտը քարացել էր, դարձել անարձագանք: Սակայն եթե այդպես լիներ, այդ դեպքում չէր էլ ստեղծվի «Վարդի շրթունքդ, աղջի՛կ աչագեղ...»-ը, որի ամեն մի տողը ինքնին կիրք է...

Այժմ անտիպների մասին, որոնք տողերիս հեղինակը հայտնաբերեց Իսահակյանի արխիվում «Հայդուկի երգեր» գրքի անտիպների բաժինը կազմելու շրջանում: Այդ բանաստեղծությունները երկուսն են: Առաջինը «Մարդկանց ժպիտին դու մի՛ հավատա...», թվագրած «1904, մայիսի 1»: Անշուշտ շատ իսահակյանական երկ է, որտեղ ասես դեկլարատիվ ձևով առաջ են բերված նրա մի շարք մտահանգումները՝ «Մարդկանց ժպիտին դու մի՛ հավատա», «Անուշ խոսքերը թույն են ու դաշույն», «Հեռու մարդկանցից», «Այս կեղծ ու պատիր,- շինծու աշխարհում // Դու մենակ ապրիր», «Խայթի՛ր ամենքին, ծաղրի՛ր անխնա», «Օրենքդ լինի - ապրել մեն-մենակ»: Նման մտորումները նոր չէին Իսահակյանի մոտ, բանաստեղծը պետք է որ ձերբազատվեր իրեն պաշարած ծանր խոհերից (ինչի գերագույն արտահայտությունը պետք է լիներ «Աբու-Լալա Մահարի» պոեմը): Բայց և այնպես Իսահակյանը հարկ չհամարեց դա ներկայացնել տպագրության և այն երկար տարիներ մնացել էր մոսկովյան ձեռագրերի շարքում:

Երկրորդ բանաստեղծությունը՝ «Վիշտս ծանր է, սրտիս վերքը անդարման...» (թվագրված «1904, մայիսի 4»), մի զարմանալի առկայծում է, Ռուսիայի սրտում գրված, սակայն իր ողջ էությանը ուղղված պոետի հայրենիքին: Այս առաջին հայացքից անսպասելի թվացող հանգամանքը շատ օրինաչափ է Իսահակյանի պոեզիայի համար: Ուր ուզում է նա գտնվեր, աշխարհի լավագույն թե ընտրագույն վայրում, միևնույն է, նրա մտասևեռումների կենտրոնը

Հայաստանն է: Այսպիսին է Իսահակյանի պոեզիայի էությունը: Եվ կարելի է միայն զարմանալ, որ մի մայիսյան արևոտ առավոտ Իսահակյանը կարող էր գրել գեղատեսիլ Մոսկվայի մասին: Իրոք որ, ինչպես ասել է ինքը՝ «Ես՝ զավակ ծնված ու փոքրիկ ազգի, // Սրտիս արյունով մեծ վիշտս եմ գրում»: Ուրիշ ազգերը հազիվ թե հասկանային մեր պոետին: Այնպես որ, ինչքան որ Իսահակյանը Մոսկվայում էր, այնքան էլ Հայաստանում էր...

*...Վիշտս մեծ է, վերքը սրտիս անդարման,
Մեր դաշտերի օրոր-շորոր զով հովեր,
Կացե՛ք, կացե՛ք, մրմունջներս ձեզի տամ,
Տարե՛ք ձեզ հետ, տարե՛ք, տվե՛ք Մասիսին.
Մեր սարերով, մեր ծովերով, ամպերով,
Թո՛ղ Մասիսը դարդս հասցնե աստղերին,
Ու աստղերը վիշտս պատմեն աշխարհին:*

Ուղևորության հաջորդ կայանը Սանկտ Պետերբուրգն էր՝ ռուսաց փառքի և հզորության խորհրդանիշը: Խորհրդանիշ, որ հենց ռուս հեղափոխականների անխոհեմության, «Հավասարության և արդարության» կեղծ քարոզների շնորհիվ քանդվեց ու փոշիացավ, որ 80 երկար ու ձիգ տարիներ անց մոռից վերագտնի իր հպարտ անունը, և այս անգամ ևս անմարդկային ճիգերով փորձի «բնությանը բերել իր հունին», կարողանա փրկել իր ազգը մարքս-լենինյան «սոցիալիզմի» անհաջող էքսպերիմենտից: Սակայն հեղափոխության ուրվականը, թեև հեռու, բայց և այնպես տալիս էր իր նշմարները: Չմոռանա՞նք, որ ընդամենը կես տարի անց Պետերբուրգը պիտի արյունով հեղեղեին (հունվարի 9-ի դեպքերը):

Իսահակյանի համար Պետերբուրգն անշուշտ հայտնություն էր՝ աշխարհի ամենագեղեցիկ քաղաքներից մեկը, որն իր սալաքարերի վրա դեռևս կրում էր բանաստեղծի պաշտելի հեղինակների՝ Պուշկինի, Լերմոնտովի, Տյուտչևի, Դոստոևսկու ոտնահետքերը:

Ի դեպ, Իսահակյանը ուղևորվում է Պետերբուրգ Մոսկվայից 1904-ի ապրիլի սկզբին, մնում այնտեղ մոտ երեք շաբաթ և ամսվա վերջին վերադառնում Մոսկվա: Ցավոք, այդ շրջանի հետ կապված փաստական նյութերը քիչ են: Իսահակյանի՝ Պետերբուրգում գտնվելու ժամանակաթվի մասին ստույգ տեղեկություն է տալիս նրա «Էս սարերից հիմա արտուտը կուզա...» բանաստեղծության ինքնագիրը թվագրված հեղինակի ձեռքով՝ «18 ապրիլ, Ս. Պետերբուրգ, 1904», ինչպես և այնտեղ ձեռք բերած հետևյալ գիրքը՝ «Горе от ума». Комедия в 4-х действиях в стихах А. С. Грибоедова. С. Петербург. 1880 (Издание кн. маг.-на «Нового времени». Тип-ия А. Суворина) հետևյալ

ինքնագրով «Ав. Исаакян, 3-апреля 1904, С. Петербург»: Ընդհանրապես մակագրությունները գրքերի վրա (իսկ դա եղել է Իսահակյանի բարի սովորությունը) շատ բան են ասում մեծ մարդու կյանքի պատմության վերաբերյալ: Մինչև վերջերս ընդունված է եղել համարել, որ Իսահակյանը 1904-ի գարնանը եղել էր Մոսկվա-Պետերբուրգ և էլի Մոսկվա: Մինչդեռ նա գալիս է Պետերբուրգ ապրիլի սկզբներին՝ 1-ին կամ 2-ին, մնում մեկ շաբաթ և այնտեղից մեկնում Լատվիայի հիմնավորց մայրաքաղաքը՝ Ռիգա: Այս մասին միակ, բայց շատ ճշգրիտ փաստը կրկին գերմանական այն գրքերն են, որ նա ձեռք է բերել Ռիգայում.

1. B. Carneri, Der moderne mensch («Ժամանակակից մարդը»), Stuttgart, 1901, գերմաներեն՝ «Av. Issaakian, 12 Apr. 1904, Riga» մակագրությամբ:

2. Griechenlieder von Wilhelm Muller (Բանաստեղծություններ), Halle, 1887, գերմաներեն՝ «A. Issaakian 1904, Riga» մակագրությամբ:

3. Polnische Dichtung (Լեհական բանաստեղծության անթոլոգիա) von Albert Weiss, Halle, 1891. «A. Issaakian, 12 Apr. 1904, Riga» մակագրությամբ:

Մեկ շաբաթ Ռիգայում մնալուց հետո վերադառնում է Սանկտ Պետերբուրգ: Հարկ է նշել, որ նույն՝ 1904 թ. ապրիլին Ս. Պետերբուրգյան նշանավոր «Նիվա» հանդեսը (1904, N 4, էջ 643-644) տպագրում է Իսահակյանի «Մի՞թե պիտի թողնին, թողնին...» (1892) բանաստեղծությունը Ապոլոն Կորինֆսկու թարգմանությամբ՝ «О, неужели должны завянуть розы» վերնագրով:

Երբ Իսահակյանը Պետերբուրգից ետ է գալիս Մոսկվա, իրեն կեղծ լուր է հասնում, որի մասին ինքը իսկույն գրում է Թումանյանին (1904, մայիսի 10, Մոսկվա). «Սիրելի Օհաննես. Այսօր Նիկոլից նամակ ստացա, որ գրում է, թե Թիֆլիսում ասելիս են եղել, որ ես սպանված եմ.- տեսնում ես, որ շատ սուտ լուր է. արդեն Բաքվից ու այդտեղից և ուրիշ տեղերից ինձ հասել են այդ անհամ լուրերը. չգիտեմ՝ պատժառն ի՞նչ է...» (VI, 45-46): Մայիսի վերջերին Իսահակյանը թողնում է Մոսկվան և գնացքով՝ Ռոստով-Բաքու երթուղով մեկնում հայրենիք: